Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Թամարա Սարգսյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Հանրակրթության վարչության պետ

Թամար Ալեքսանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2025թ. նոյեմբերի 3-7

Հրավիրող կողմը.
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
(այսուհետ՝ ՏՀԶԿ, OECD)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Աշակերտների միջազգային գնահատման PISA-2025 ծրագրի» (այսուհետ՝ PISA ծրագիր) վերլուծության և ազգային հաշվետվության կազմման աշխատաժողովին

Քննարկված թեմաները.

2025 թվականի գարնանը Հայաստանն առաջին անգամ մասնակցել է ՏՀԶԿ «Աշակերտների միջազգային գնահատման PISA-2025 ծրագրին», որի նախապատրաստական աշխատանքները մեկնարկել էին դեռևս 2022 թվականից: PISA-ն ուսումնառության գնահատման միջազգային ամենախոշոր ծրագիրն է. մեկնարկել է 2000 թվականին և անցկացվում է 3 տարին մեկ անգամ: Այն ուսումնասիրում է, թե ինչպես են 15-ամյա աշակերտները կիրառում իրենց գիտելիքը իրական կյանքի իրավիճակներում՝ ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում:

Նոյեմբերի 3-7-ը կազմակերպված գործնական ուղղվածությամբ աշխատաժողովը միտված էր PISA ծրագրին առաջին անգամ մասնակցող երկրների ազգային վերլուծական թիմերի կարողությունների զարգացմանը. մասնավորապես, ներկայացվել են PISA-2025 ծրագրի ազգային զեկույցի կազմման տրամաբանությունը, կառուցվածքը և ողջ գործընթացը, տվյալների բազաների հետ աշխատանքի մեթոդները, տվյալների մեկնաբանման առանձնահատկությունները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՏՀԶԿ PISA ծրագրի մասնագետների կողմից ներկայացվել են ազգային զեկույցի կազմման առանձնահատկությունները: Մասնավորապես նախատեսվում է ունենալ չորս առանձին բաժին՝ «Սովորողների առաջադիմությունը», «Սովորողի զգացումները, համոզմունքները և դիրքորոշումները սովորելու և դպրոցի նկատմամբ», «Հաջողության հիմքերը. դպրոցական ռեսուրսներ» և «Հաջողության հիմքերը՝ կրթական միջավայր»: Նախատեսվում է այս թեմաներից յուրաքանչյուրում առանձնացնել պետության կրթության քաղաքականության տեսանկյունից առանցքային հարցադրումներ, որոնք կարտացոլվեն վերլուծության մեջ: Քննարկվել են բաժիններից յուրաքանչյուրում ներառվելիք ցուցանիշների շրջանակը, վերջիններիս մեկնաբանման հնարավորություններն ու տարբերակները, ինչպես նաև տարածաշրջանային և այլ համադրելի (բենչմարք) երկրների ընտրության չափանիշները, վերլուծության իրականացման համար կիրառվող ծրագրային ապահովումները՝ SPSS, IDB Analyzer:

PISA-2025-ի միջազգային զեկույցի հրապարակումը սպասվում է 2026 թվականի սեպտեմբերի 8-ին, որին նախորդում են մի քանի առանցքային ժամկետներ: Նախապատրաստական աշխատանքները մեկնարկում են 2025 թվականի նոյեմբերից և նախատեսվում ավարտվել 2026 թվականի փետրվարին: 2026 թվականի մարտի 6-ին նախատեսվում է ստանալ միջազգային տվյալների բազայի առաջին տարբերակը (IDB1) և իրականացնել ստուգումները: 2026 թվականի ապրիլի կեսերին ակնկալվում է ազգային զեկույցի առաջին նախագիծն ուղարկել OECD՝ նկատառումներ ստանալու: Հունիսի 8-ին նախատեսվում է IDB 2-ի ստացումը և վերլուծական խմբի ղեկավարների հանդիպումը մայիս/հունիս ամիսներին՝ ազգային զեկույցը վերջնականացնելու նպատակով: Ազգային զեկույցի վերջնական անգլերեն տարբերակը պետք է պատրաստ լինի 2026 թվականի հուլիսի վերջին, որից հետո կիրականացվի թարգմանությունը:

Աշակերտների ուսումնառության արդյունքները գնահատելուց բացի ուսումնասիրվելու են նաև դրանց կապը և ազդեցությունը սոցիալ-տնտեսական, սեռային, տարածքային և այլ անհամաչափությունների, ինչպես նաև՝ աշակերտների վարքագծի, համոզմունքների ու զգացողությունների, դպրոցների ռեսուրսների և ուսումնական միջավայրի ազդեցությունների տեսանկյուններից:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկվել է միջազգային և ազգային զեկույցների կազմման ժամանակացույցը, պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջնորդվել դրանով, ինչպես նաև ազգային զեկույցի ձևաչափով և OECD-ի կողմից սահմանված ընթացակարգով:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ազգային զեկույցի մշակման նախապատրաստական աշխատանքների շրջանակում ակնկալվում է ազգային խորհրդակցությունների անցկացում կրթության ոլորտի շահառուների և PISA-2025 ծրագրի ազգային համակարգող խմբի հետ՝ ներկայացնելու ծրագրի էությունը, որոշելու ուսումնասիրության առարկա ցուցանիշները, զեկույցի թեմատիկ շրջանակը: Այնուհետը աշխատանքները կկազմակերպվեն OECD-ի կողմից սահմանված ընթացակարգով և ժամկետներով:

Ստորագրությունը, ամսաթիվը.
19 նոյեմբերի 2025թ.

Թամարա Սարգսյան

Թամար Ալեքսանյան